

կաթողիկոս, եպիսկոպոս եւ վարդապետ կայսեր հետ հաղորդուեցան, նորա դաւանութիւնը դաւանեցան, ընծաներ, պարեւներ առին, եւ երբ ժողովքէն դուրս ելան՝ հայ ազգը՝ ժողովքը տարբեր, ժողովուրդը տարբեր լինիլն յայտնի ըրաւ, եւ այդ որոշմունքներուն մէկը չընդունեց, եւ եզր իւր գաւկնէրուն խորթ հայր մը եղաւ եւ այնպէս ատելի մեռաւ:— Ես՝ ա՛յն Շաւարշ Ռշտունուոյն թոռն եմ, որ երբ բոլոր հայ ազգը մկրտուիցաւ Եփրատայ մէջ ի Ս. Լուսաւորչէ, Ասորեստան էր իր գնդով, եւ ձմեռը դառնալով եկաւ Վաղարշապատ, Տրդատայ հրամանաւ յանձն առաւ քրիստոնէութիւնը. Լուսաւորիչ եւ թագաւորը Տարօն էին, ուստի ասորի եպիսկոպոս մը՝ կը պատմեն յիշատակարանք՝ զինք պիտի մկրտէր: Երբ, մէկ ոտքը դնելով աւազանին մէջ հարցուց. «Իմ հարցս՝ Ռշտունեաց նախարարաց հոգիք ո՞ր եմ հիմա. նոյն արքայութիւնն ե՞ն, ուր դու ինձ քարոզեցիր թէ՞ ուրիշ տեղ մը»: Եպիսկոպոսն անհանճար՝ շուտ մը պատասխանեց թէ՝ «Դժոխքին մէջտեղն եմ»: Շաւարշ ետ քաշուելով՝ «Եթէ այդպէս է՝ ես իմ նախահարցս քով կ'ուզեմ երթալ, քու արքայութիւնդ քեզ լինի, ասորի»,— ըսաւ եւ քաշուեցաւ: Վերջը Լուսաւորիչ ջանաց համոզել այդ Ռշտունեաց տերը՝ թէ աստուծոյ դատաստանի գաղտնիք եմ, իեք ողորմած է հեթանոսաց, որ Քրիստոսի Աւետարանին տեղեկութիւն չունին, մարդս չի կրնար դատապարտութեան վճիռներ տալ, եւ թէ եպիսկոպոսը մեծ յանդգնութիւն ըրած էր այդպիսի վճռողական պատասխան տալով: Յիշատակարանք չեն գրուցեր, բայց ես կ'երեւակայեմ թէ առանց Տրդատայ օգնութեան Լուսաւորիչ ինքն լինելով՝ համոզած չէ կատարելապէս այդ Ռշտունեաց Տերը աւազանին մօտենալու երկրորդ անգամ: Ես՝ Թեոդորոս Ռշտունի, այդ Շավարշայ թոռն եմ, եւ ճիշտ այդ յետին շինականին պէս կը մտածեմ, որ առանց աստուածաբանական ուսմունք ունենալու կը գրուցեր. այդ Եզր կաթողիկոսը Թադէոսէ, Բարդուղիմէոսէ, Լուսաւորչէ լաւ՝ գիտէ հայութիւնը, քրիստոնէութիւնը. մեղա՛յ աստուծոյ, մենք Լուսաւորչայ դաւանութիւնը թողո՞ւնք, որովհետեւ այդ Եզր Կողբաց աղեհանք կը սեփականացնէ, աստուած հեռի՛ ընէ, ինքն աղն ուտէ եւ մեզ աղու տա: Բացի հայն, մտաբերեցէք, որ այդ պահանջմանց վերջը չի կայ, այդ յունաց ազգն ամէն օր նոր բան կստեղծէ ի հաւատս, այդ Կոստանդին կայսրը իր եկեղեցուոյն Զետ միաբան չէ, պատրիարքներ, եպիսկոպոսներ կը չարչարէ, կաքսորէ հաւատոյ խնդիրներու համար: Կայսրը մեզնէ հաւատարմութիւն ուզէք պատրաստ ենք իրեն ծառայելու, բայց մեր հաւատքին, մեր խղճմտանքին չի հպի լաւ կընէ»:

Հրովարտակին երկար պատասխան մը գրուեցաւ, ուր հայոց կաթողիկոս, նախարարք եւ եպիսկոպոսունք կը յայտնէին, թէ Նիկիոյ դաւանութենէն աւելի բան մը ընդունիլ իրենց անկարելի էր: Այն ատեն յոյնքն եւ իրենց սակաւաթիւ համախոիք սկսան աւելցնել հակառակութիւնը եւ Զայաստանու արեւմտեան